# Հանձնաժողովի՝ ընտրողների հոսքը կարգավորող անդամի գործառույթները

- Կարգավորե՛ք ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը:
- Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգե՛ք, թե չունի արդյոք ընտրողը նշմարում, և, երբ կհամոզվեք, որ ընտրողը չունի նշմարում, նրան տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:
- Հետևե՛ք՝ քանի ընտրող է կանգնած ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող կա կանգնած, ժամանակավորապես դանդաղեցրե՛ք քվեարկության շենք հերթական ընտրողի մուտքը:
- Ընտրողին ուղղորդե՛ք դեպի այն գրանցման սեղանը, որին պատկանում է ընտրողների ցուցակում ընդգրկված՝ նրա ազգանվան առաջին տառը:

## Նկատի՛ ունեցեք.

- ✓ Եթե ընտրողը չունի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, բացատրե՛ք, որ նա չի կարող մասնակցել քվեարկությանը, և խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:
- ✓ Եթե ուլտրամանուշակագույն լապտերով նշմարումը ստուգելիս պարզվի, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Ընտրողի ով լինելը տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Ընտրողին խնդրե՛ք լքել ընտրական տեղամասը:
- ✓ Այն ընտրողը, որը «ֆիզիկական վիճակի», մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը: